ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/118

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Բողոք բերող՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Աութսորս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչ՝ Գ. Ջանջուղազյանի
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.12.2021թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է.

1. չեղարկել թիվ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը,

2. պարտավորեցնել թիվ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը հետևյալ կերպ.

ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳԻՆԸ ԸՍՏ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՑ ԱԱՀ-Ի (ՀՀ դրամ)
	ԱՆ ՎԱՆ Ո ՒՄԸ	«ԲԻԶՆԵՍ ԷԱԻՏԱ» ՍՊԸ
2	«դերձակ» մասնագիտությամբ ուսուցում	360 000
4	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
5	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
6	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
7	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
8	«դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
10	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
11	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	450 000
19	«խոհարար» մասնագիտությամբ ուսուցում	810 000

3. որպես հետևանք փոփոխել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը՝ թիվ 2 արձանագրային որոշման փոփոխված տարբերակին համապատասխան:

4. կամ չեղարկել/վերացնել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը, որպես հետևանք չեղարկել/վերացնել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 27.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/118 համարի ծածկագիրը:

10.01.2022թ.-ին և 24.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 10.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.01.2022թ.-ին:

2. <u>«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 24.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար «մասնագիտական ուսուցման ծառայություն» ձեռքբերման նպատակով 06.12.2021 թվականին հրապարակել է թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև՝ Գնման ընթացակարգ):

1.2.«ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդի բացման ժամկետ է նշվել հայտարարության հրապարակման օրվանից հաշված 9-րդ օրը ժամը 11:00-ին:

1.3. Թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդը չի բացվել հրավերով սահմանված ժամկետում:

1.4.Գնման ընթացակարգի շրջանակում «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից) մասնակցության հայտ է ներկայացրել թիվ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ և 19-րդ չափաբաժիններով:

1.5.Գնման ընթացակարգի շրջանակում «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊ ընկերությունը ընտրված մասնակից է ճանաչվել թիվ 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14- րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չաափաբաժիններով:

1.6.Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդի շրջանակում 17.12.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ նշված գնային առաջարկների և մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկների միջև առկա է հետևյալ անհամապատասխանություն.

ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՍՆԱԿՑԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ	ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ
2	«դերձակ» մասնագիտությամբ ուսուցում	360 000	360 000
4	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000	180 000
5	«վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000	՛
6	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000	՛
7	«վարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000	՛
8	«դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000	278 400
9	«կարող» մասնագիտությամբ ուսուցում	-	464 000
10	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000	185 600
11	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	450 000	464 000
13	«խոհարար» մասնագիտությամբ ուսուցում	-	371 300
14	«մենեջեր հյուրանոցի» մասնագիտությամբ ուսուցում	՛	556 800
15	«կարող» մասնագիտությամբ ուսուցում	-	464 000
17	«հրուշակագործ» մասնագիտությամբ ուսուցում	՛	278 400

19	«խոհարար» մասնագիտությամբ ուսուցում	810 000	742 400

1.7. Պատվիրատուն գնման ընթացակարգի շրջանակում Մասնակցին 17.12.2021 թվականին ծանուցել է անգործության ժամկետի վերաբերյալ նշելով դրա սկիզբը և ավարտը 17.12.2021 թվականը, այիսինք չի պահպանվել 10 աշխատանքային օրը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրանային աճուրդով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին ՀՀ, կառավարության 18.05.2017 թվականի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի (այսուհետ՝ Կարգ) 12-րդ կետի համաձայն՝ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ սույն կարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Վերոգրյալ իրավական նորմերի համապարփակ վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ օրենսդիրը գնման ընթացակարգի իրականացման համար սահմանել է որոշակի սկզբունքներ այն է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, նշված սկզբունքները կոչված են ապահովելու գնման ընթացակարգի թափանցիկությունը, Պատվիրատուի և Մասնակցի իրավաչափ վարքագիծը և այնպիսի ոչ խտրական մոտեցումը, որը կբացառի գնման ընթացակարգում Պատվիրատուի կողմից խախտումների կատարումը: Օրենսդրի կողմից սահմանվել է նաև էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի հայտերի բացման ընթացակարգ, որը հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը: Գործող օրենսդրական կարգի համաձայն աճուրդն ամփոփելու պահին համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները, իսկ աճուրդի ամփոփումը պետք է կատարվի հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու: Նշված վավերապայմանների ապահովման դեպքում նոր միայն հնարավոր է փաստել գնման ընթացակարգի սկզբունքների պահպանումը, հակառակ պարագայում գործ կունենանք այնպիսի ոչ իրավաչափ վարքագծի և օրենսդրական նորմերի խախտման հետ, որոնք համատեղելի չեն գնման ընթացակարգի սկզբունքների հետ: Ընդ որում օրենսդիրը սահմանել է նաև էլեկտրոնային աճուրդի եղանակով գնման ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետը առնվազն 10 օր, որի ընթացքում մասնակից կարող է այս կամ այն կերպ վիճարկել, Պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի գործողություններն ու անգործությունը եթե դրանք ոտնահարում են իր իրավունքները:

Սույն դեպքում թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդի շրջանակում Մասնակիցը հայտ է ներկայացրել թիվ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ և 19-րդ չափաբաժիններով, սակայն անհասկանալի պատճառներով ծրագրի կողմից գեներացվել է հայտ թիվ 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով, արդյունքում նաև փոփոխության ենթարկելով Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները: Ծրագրային ապահովման սխալի արդյունքում Մասնակիցը ճանաչվել է ընտրված մասնակից թիվ 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով, որոշ դեպքերում ոչ իր կողմից ներկայացված, իսկ որոշ դեպքերում իր կողմից ներկայացված գնային առաջարկներին չհամապատասխանող թվերով: Պատվիրատուն պարտավոր է ապահովել գնման

գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, այդ թվում այն դեպքերում երբ դա իրականացվում է ծրագրային ապահովման միջոցով, հակառակ պարագայում կրելով դրա բացասական հետևանքները: Ծրագրային խափանման հանգամանքը կարող է հաստատվել հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի եզրակացության հիման վրա, սակայն հատկանշական է նաև այն հանգամանքը, որ թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» էլեկտրոնային աճուրդը չի բացվել հրավերով սահմանված ժամկետում, ինչպես նաև անգործության ժամկետի ծանուցումը եղել է սխալ, որը նույնպես իրականացվում է էլեկտրոնային եղանակով այս հանգամանքների համապարփակ ուսումնասիրության արդյունքում կփաստվի ծրագրային ապահովման սխալի փաստը, որի արդյունքում Մասնակցի հայտը արձանագրվել է սխալ գնահատող հանձնաժողովի 17.12.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը ենթակա է փոփխման կամ չեղարկման, կամ ընդհանրապես գնման ընթացակարգն է ենթակա չեղարկման:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է.

1. չեղարկել թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը,

2. պարտավորեցնել թիվ «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը հետևյալ կերպ.

ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ	ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳԻՆԸ ԸՍՏ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՑ ԱԱՀ-Ի (ՀՀ դրամ)
	ԱՆ ՎԱՆ Ո ԻՄԸ	«ԲԻՋՆԵՍ ԷԱԻՏԱ» ՍՊԸ
2	«դերձակ» մասնագիտությամբ ուսուցում	360 000
4	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
5	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	360 000
6	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
7	«կարսահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
8	«դիմահարդար» մասնագիտությամբ ուսուցում	270 000
10	«համակարգչային հաշվապահություն» մասնագիտությամբ ուսուցում	180 000
11	«մատնահարդար» մասնագիտությամբ ուսուցում	450 000
19	«խոհարար» մասնագիտությամբ ուսուցում	810 000

3. որպես հետևանք փոփոխել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը՝ թիվ 2 արձանագրային որոշման փոփոխված տարբերակին համապատասխան:

4. կամ չեղարկել/վերացնել նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականին ընդունված թիվ 2 արձանագրային որոշումը, որպես հետևանք չեղարկել/վերացնել նաև նույն ընթացակարգի շրջանակում 17.12.2021 թվականի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

3. <u>Միասնական սոցիալական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21624-2021 գրությամբ դիմել է Միասնական սոցիալական ծառայությանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 30.12.2021թ.-ին թիվ 02/ԳՋ/58886-221 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«2021 թվականի դեկտեմբերի 24-ին «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/118 բողոքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

2021 թվականի դեկտեմբերի 6-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից հայտարարվել է Ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման ընթացակարգ՝ ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով հինգ կազմակերպություններ՝ այդ թվում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Գնման ընթացակարգը կազմակերպելու և հայտը գնահատելու հիմքում ընկած իրավական հիմնավորումները.

ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի դեկտեմբերի 15-ը, հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021թ դեկտեմբերի 16-ին, ինչի վերաբերյալ առկա են հակադարձ աճուրդի ժամանակացույցի ծանուցումները՝ հայտով ներկայացված

չափաբաժինների համար աճուրդը սկսվելու օրվա, ժամի վերաբերյալ: Ընկերությունը մասնակցել է վերը նշված աճուրդին, որը տեղի է ունեցել հրավերով սահմանված ժամկետում, ինչի մասին տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ (https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/15747/code/1YTVjdS+INS31LHVg9S+1YHUsi0yMi84/bo/1LLVq9Wm1bbVpdW9INS31azVq9W/1aEg1Y3VitS4/):

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերի 8.9 կետով սահմանված պահանջների համապատասխան՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստում գնահատվել է գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի միջոցով (այսուհետ՝ համակարգ) առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից համակարգով ներկայացրած հայտում ներառված փաստաթղթերի՝ ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8 ծածկագրով հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը:

Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած հայտը գնահատվել է բավարար և վերջինս էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի կողմից հայտարարվել է ընտրված մասնակից 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ չափաբաժինների համար:

Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Աճուրդի կարգ) և այլ իրավական ակտերի, հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը Աճուրդի կարգ 10-րդ կետի պահանջներին համապատասխան գնահատում է էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի համակարգով ներկայացրած հայտի փաստաթղթերը: Մասնակիցները գնային առաջարկը ներկայացնում են հրավերի 1-ին մասի 5-րդ բաժնով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով և մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը իրավաչափ է, բխում է գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքներին:

Ընկերությունը մասնակցել է 2021թ դեկտեմբերի 16-ին տեղի ունեցած աճուրդին, որի արդյունքները էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգի էջում արտացոլված են հետևյալ հղմամբ (https://eauction.armeps.am/hy/procurer/tender_details/tid/15747/):

Հետևաբար բողոքում բերված պնդումը, որ Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշմամբ արձանագրվել է սխալ, անհիմն է:

Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումները և խեղաթյուրումները.

Մասնակցության հայտը՝ դիմում հայտարարություն (Հավելված 1) էլեկտրոնային (eauction.armeps.am) համակարգում ստեղծվում է մասնակցի կողմից համակարգում նշված /մասնակցի կողմից ընտրած/ չափաբաժինների համար, համակարգում համապատասխան դաշտերը լրացնելուց հետո համակարգի կողմից ստեղծված էլեկտրոնային աճուրդին մասնակցության դիմում հայտարարությունը (Հավելված 1) բեռնվում է համակարգչի մեջ, որն էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացնում է Ընկերության տնօրենը, կամ նման լիազորություն ունեցող անձը, հետևաբար Ընկերությունը հաստատելով դիմում հայտարարությունը, չէր կարող աճուրդին մասնակցելուց հետո պարզել, որ այլ չափաբաժիններին մասնակցության հայտ է ներկայացրել:

Ընկերության կողմից «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին ներկայացված դիմում հայտարարությունով (Հավելված 1) Բիզնես Էլիտա ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել միասնական սոցիալական ծառայության կողմից «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 2, 4, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 19 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ (https://eauction.armeps.am/hy/procurer/tender_details/tid/15747/):

Ընկերության կողմից լիազորված անձը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված դիմում հայտարարությունը ներբեռնում է համակարգ, որից հետո համակարգում արդեն իսկ նշված չափաբաժինների համար լրացնում է գնային առաջարկները:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի 1.6 կետի աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը խեղաթյուրում է գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 17-ի թիվ 2 արձանագրությամբ ներկայացված տեղեկատվությունը. Այսպես

ա/ աղյուսակի <<գնահատող հանձնաժողովի արձանագրած գնային առաջարկը>> սյունյակի՝ 8-րդ տող, 9-11-րդ տողեր, 13-15-րդ տողեր, 17-րդ տող, 19-րդ տողերում նշված թվերը, գնման հայտով տվյալ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գներն են, (արձանագրություն թիվ 2, հասանելի է հետյալ հղումով՝ https://eauction.armeps.am/hy/procurer/tender_details/tid/15747/):

բ/ <<մասնակցի գնային առաջարկը>> սյունյակի 4-րդ, 10-րդ, 11-րդ, 19-րդ տողերում նշված թվերը չեն համապատասխանում համակարգում Ընկերության առաջարկած գնային առաջարկներին (արձանագրություն թիվ 2, հասանելի է հետյալ հղումով՝ https://eauction.armeps.am/hy/procurer/tender_details/tid/15747/):

Հարկ է նշել, որ անգործության ժամկետը ոչ թե 10 աշխատանքային օր է (բողոքի 1.7 կետ), այլ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և հրավերի 8.25 կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Անգործության ժամկետի վերաբերյալ ծանուցումը համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով է ուղարկվում մասնակիցներին և ոչ թէ Պատվիրատուն է ուղարկում:

Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 2021թ դեկտեմբերի 28-ին է մասնակցին ուղարկվել պայմանագիր կնքելու ծանուցումը, որը հասանելի է հետևյալ հղումով (https://eauction.armeps.am/hy/procurer/award/cgid/8745/):

Հիմք ընդունելով հայտերը գնահատելու իրավական հիմքերը, գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության տառին համապատասխան՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումները իրավաչափ են, համապատասխանում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, հետևաբար բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Աութսորս» ՍՊԸ-ն, 17.01.2022թ.-ին ներկայացված միջնորդությամբ ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, ներկայացված միջնորդությամբ նաև հայտնել է հետևյալը.

«Մասնակցելով «ՄՄԾ-ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին՝ մենք հավաստում ենք, որ հնարավոր չի եղել մասնակցելու հակադարձ աճուրդի համակարգի խափանման պատճառով ի սկզբանն չարտացոլվեցին չափաբաժինները, ինչն էլ թեժ գծով տեղեկագրեցինք ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակցին, որից հետո համակարգը սկսեց աշխատել, սակայն խափանումներով՝ փոփոխվել էին մեր մուտքագրած չափաբաժինները և գնային առաջարկները: Ուստի միանում ենք «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի պահանջին և խնդրում ենք չեղարկել «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման գործընթացը:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/118 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարվել է «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 15.12.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ին:

iv. «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցելու Միասնական սոցիալական ծառայության կողմից «ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «գ» պարբերության համաձայն՝ 3-րդ և 18-րդ չափաբաժինների մասով հայտեր չեն ներկայացվել:

vi. Արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 3-րդ և 18-րդ չափաբաժինները հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, այն է՝ ոչ մի հայտ չի ներկայացվել, իսկ 5-7-րդ և 16-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, այն է՝ առաջարկված գները գերազանցում են նախահաշվային գները:

vii. Արձանագրության 4-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

viii. www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

ix. Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/723-2022 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել դիրքորոշում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի և Միասնական սոցիալական ծառայության կողմից միջնորդություններով ներկայացված հարցերի վերաբերյալ:

x. Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.01.2022թ.-ի ներկայացրած թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/723-2022 գրությամբ հայտնել է, որ համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդն 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ից մինչև ժամը 12:30-ն ընկած ժամանակահատվածում ընթացել է առանց ծրագրային խափանումների, որի ժամանակացույցի մասին տեղեկատվությունը 15.12.2021թ.-ին ժամը 11:00-ին «Հակադարձ աճուրդի ժամանակացույց» ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է հայտատու մասնակիցներին:

Միաժամանակ տեղեկացրել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով համակարգում ներկայացրած հայտերը չեն կարող ենթարկվել բովանդակային փոփոխության, քանի որ դրանք ձևավորվում են մասնակցի կողմից համակարգում նախատեսված պարտադիր լրացման դաշտերում տվյալների մուտքագրման արդյունքում, իսկ կից ֆայլերը ներբեռնվում են համակարգ վերջինիս կողմից:

Նախարարությունը հայտնել է նաև, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից վերոգրյալ ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը անխոչընդոտ բեռնվել է

համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է eauction.armeps.am կայքի հանրային բաժնում:

xi. eauction.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն 16.12.2021թ.-ին 10-րդ չափաբաժնի մասով 11:31:17-ից 11:59:57-ը և 11-րդ չափաբաժինի մասով 11:33:25-ից 11:42:33-ը կատարել է գների նվազեցումներ:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ

օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է նաև, որ աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ին:

Հրավերի 8.3-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը վեց չափաբաժնից ավելի լինելու դեպքում էլեկտրոնային աճուրդը կազմակերպվում է միաժամանակ առավելագույնը վեց չափաբաժնի համար: Վեցից ավել չափաբաժինների դեպքում յուրաքանչյուր հաջորդող վեց չափաբաժնի համար էլեկտրոնային աճուրդը սկսվում է չափաբաժինների նախորդ խմբի էլեկտրոնային աճուրդի կազմակերպման համար սահմանված 30 րոպեն ավարտվելուց անմիջապես հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև

տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա մնացած չափաբաժինների համար էլեկտրոնային աճուրդ կազմակերպվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 09:00-ին՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված պայմանները:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ հրավերով սահմանվում է, որ աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին: Աճուրդի ընդհանուր տևողությունը պետք է լինի 30 րոպե: Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել նաև, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է, ապա գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ընթացակարգի շրջանակներում պայմանագիր չկնքելու հիմքով:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Միասնական սոցիալական ծառայության կարիքների համար մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 15.12.2021թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ին: «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցելու Միասնական սոցիալական ծառայության կողմից «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Հանձնաժողովի 17.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի «գ» պարբերությամբ արձանագրվել է, որ 3-րդ և 18-րդ չափաբաժինների մասով հայտեր չեն ներկայացվել, իսկ 3-րդ կետով՝ 3-րդ և 18-րդ չափաբաժինները հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, այն է՝ ոչ մի հայտ չի ներկայացվել, իսկ 5-7-րդ և 16-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, այն է՝ առաջարկված գները գերազանցում են նախահաշվային գները: Նույն արձանագրության 4-րդ կետի «բ» պարբերությամբ արձանագրվել է, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժիններին մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Բողոքներ քննող անձը 17.01.2022թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/723-2022 գրությամբ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել դիրքորոշում «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի և Միասնական սոցիալական ծառայության կողմից միջնորդություններով ներկայացված հարցերի վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.01.2022թ.-ի ներկայացված թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/723-2022 գրությամբ հայտնել է, որ համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդն 16.12.2021թ.-ին ժամը 11:00-ից մինչև ժամը 12:30-ն ընկած ժամանակահատվածում ընթացել է առանց ծրագրային խափանումների, որի ժամանակացույցի մասին տեղեկատվությունը 15.12.2021թ.-ին ժամը

11:00-ին «Հակադարձ աճուրդի ժամանակացույց» ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է հայտատու մասնակիցներին:

Միաժամանակ տեղեկացրել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով համակարգում ներկայացրած հայտերը չեն կարող ենթարկվել բովանդակային փոփոխության, քանի որ դրանք ձևավորվում են մասնակցի կողմից համակարգում նախատեսված պարտադիր լրացման դաշտերում տվյալների մուտքագրման արդյունքում, իսկ կից ֆայլերը ներբեռնվում են համակարգ վերջինիս կողմից:

Նախարարությունը հայտնել է նաև, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից վերոգրյալ ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը անխոչընդոտ բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի է eauction.armeps.am կայքի հանրային բաժնում:

eauction.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ն 16.12.2021թ.-ին 10-րդ չափաբաժնի մասով 11:31:17-ից 11:59:57-ը և 11-րդ չափաբաժինի մասով 11:33:25-ից 11:42:33-ը կատարել է գների նվազեցումներ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել և իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջներին համապատասխան, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրությամբ կայացված, պայմանագիր կնքելու մասին որոշումները և «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով գնման ընթացակարգը ենթակա չեն չեղարկման (վերացման):

Ինչ վերաբերում է «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի կողմից բողոքով նշված անգործության ժամկետի խախտմանը, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ www.gnumner.am կայքում 17.12.2021թ.-ին հրապարակվել է «ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ սահմանելով անգործության ժամկետ նույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ ինչը նախատեսված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ..., ուստի տվյալ պարագայում Պատվիրատուի կողմից անգործության ժամկետի որևէ խախտում առկա չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերը անհիմն են, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման ամբողջությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 24.12.2021թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/118 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**